

**«ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ /15 օգոստոսի
2006թվականի N 671-Ն/**

Ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության
մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «ՀՀ բարձրագույն մասնագիտական ուսումնական
հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը»:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն մասնագիտական
կրթության վարչությանը՝ /պետ՝ Ռ. Գասպարյան/, սահմանված կարգով «ՀՀ
բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում
երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը» ներկայացնել ՀՀ
արդարադատության նախարարություն պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարի
տեղակալ Ա.Ավետիսյանին:

Նախարար՝ Լ.Մկրտչյան

Հ ա ս տ ա տ վ ա ծ է՝
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2006 թ. օգոստոսի 15 - ի N 671-Ն հրամանով
_____ Լ.Մկրտչյան
գրանցման N _____

Կ Ա Ր Ձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Սույն Կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Բուհեր) երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ընդհանուր պայմանները:
2. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը կազմակերպվում է կիսամյակային /կրեդիտային/ սկզբունքով: Առաջին և ավարտական կուրսերում երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն չի կազմակերպվում: Հավակնորդների դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երկու շաբաթների ընթացքում:
3. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթությունը իրականացվում է միայն վճարովի սկզբունքով:
4. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը թույլատրվում է, եթե առարկաների ժամաքանակների 25%-ից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգարքների և քննությունների թիվը, հաշվի առնելով բուհերի և մասնագիտությունների առանձնահատկությունները, ըստ տվյալ կիսամյակի չի գերազանցում 8-ը:
5. Դիմումները քննարկելու նպատակով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով: *Բուհի* ռեկտորը, ատեստավորման հանձնաժողովում հարցը քննարկելուց հետո, որոշում է ուսանողի ընդունման ժամկետը, կուրսը և մյուս պայմանները, կամ էլ պատճառաբանված հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը: Դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երկու շաբաթների ընթացքում:
6. Ատեստավորման հանձնաժողովը մրցութային հավասար պայմանների դեպքում ըստ հերթականության առավելություն է տրվում՝
 - ա) տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին,
 - բ) առավելալույն մասնագիտական ստաժ ունեցող դիմորդներին,
 - գ) դիպլոմի ներդիրում նշված առարկաների քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին:
7. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող՝ տվյալ կիսամյակում ըստ մասնագիտության ուսանողների թիվը չպետք է գերազանցի տվյալ մասնագիտության համար ՀՀ Կրթության և գիտության նախարարության լիցենզիայով սահմանված տեղերի քանակը:
8. Տարբեր պատճառներով գոյացած առարկայական տարբերությունները և առարկաների առանձին բաժինները (ուսումնական պլանների տարբերություններ, չհանձնած քննություններ և ստուգարքներ) համարվում են ակադեմիական պարտքեր: Դրանց ցանկը և ծավալները որոշում է ընդունող բուհը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները ընդունող բուհի կողմից սահմանած անհատական ժամանակացույցով:
9. Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում բուհերը Նախարարություն են ներկայացնում հաշվետվություն երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների շարժի վերաբերյալ:
10. Ոչ պետական չհավատարմագրված բուհերի շրջանավարտներին չի թույլատրվում ստանալ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն պետական կամ հավատարմագրված բուհերում: